

ՀՏԴ 159.9 ՓԻԼԻՍՈՓՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
DOI 10.54151/27382559-2021.2b-126

**ՏԱՐԲԵՐԱԿՎԱԾ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՈՒՍԱՆՈՂԻ
ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄ
Մազմանյան Մ. Մ.**

Տեխնոլոգիական դարաշրջանը, հիմնովին փոխելով մարդկության կենսաձևը, ժամանակակից մարդուց պահանջում է աննախադեպ, ազատ և անհամակարգ տեղեկատվական հոսքերի պայմաններում արագ կողմնորոշվելու, կենսական տարբեր իրավիճակներին ադեկվատ գնահատականներ տալու, սեփական դիրքորոշումը ձևավորելու և ինքնուրույն որոշումներ կայացնելու կարողություններ և հմտություններ, որոնք հատկապես իրագործելի են դառնում քննադատական մտածողություն ունենալու շնորհիվ:

Սույն հոդվածում առաջարկություն է արվում ուսանողի քննադատական մտածողության զարգացմանը ծառայեցնել տարբերակված գնահատումը՝ հիմքում դնելով Բ. Բլումի տաքսոնոմիան, որում լավագույնս է արտացոլված քննադատական մտածողության զարգացման գործընթացի նկարագիրը:

Ենթադրվում է, որ այս սկզբունքի վրա հիմնված տարբերակված գնահատումը կխթանի քննադատական մտածողության զարգացումը Բ. Բլումի տաքսոնոմիայի յուրաքանչյուր մակարդակին համապատասխան տրամաբանորեն ճիշտ կառուցված, փոխլրացնող առաջադրանքների, հարցադրումների կամ խնդիրների լրակազմի ստեղծման դեպքում: Վերջինս դիտարկել ենք «Հոգեբանություն» առարկայի դասավանդման շրջանակներում «Ուշադրություն» թեմայի օրինակով:

Բանալի բառեր. Բ. Բլումի տաքսոնոմիա, իմացության մակարդակ, գիտելիք, ընկալում, կիրառություն, վերլուծություն, համադրում, գնահատում:

Նախաբան: Տեխնոլոգիական դարաշրջանը, հիմնովին փոխելով մարդկության կենսաձևը, ժամանակակից մարդուց պահանջում է

աննախադեպ, ազատ և անհամակարգ տեղեկատվական հոսքերի պայմաններում արագ կողմնորոշվելու, կենսական տարբեր իրավիճակներին ադեկվատ գնահատականներ տալու, սեփական դիրքորոշումը ձևավորելու և ինքնուրույն որոշումներ կայացնելու կարողություններ և հմտություններ, որոնք հատկապես իրագործելի են դառնում քննադատական մտածողություն ունենալու շնորհիվ: Վերջինս ընդհանրական կարողություն է, որով բնորոշվում է ինքնուրույն, անկախ, համակարգային և նորարարական մտածողությունը, որն էլ դարձել է արդի բուհական համակարգի գերակայություն և առաջնահերթ նպատակ [2, էջ 97], [4], որովհետև ժամանակին համընթաց զարգացող հասարակության շարժիչ ուժը արդյունավետ մտածողություն ցուցաբերող անհատն է: Քննադատական մտածողության վերաբերյալ մեր կողմից անցկացված հետազոտության արդյունքները վկայում են, որ տարբեր մասնագիտությունների ավարտական կուրսերի ուսանողների շրջանում քննադատական մտածողությունը ոչ բավարար կերպով է զարգացած [5, էջ 414], ուստի և կրթական ծրագրերի կազմման հիմքում անհրաժեշտ է դնել քննադատական մտածողության զարգացման տեսլականը:

Հայտնի է, որ քննադատական մտածողության զարգացմանը նպաստում են և՛ դասավանդվող առարկաների բովանդակությունը, և՛ դասավանդման մեթոդները, և՛ դասավանդման ոճը, և՛ դասավանդողների անձը [1, էջ 12-16]:

Սույն հոդվածում առաջարկություն է արվում ուսանողի քննադատական մտածողության զարգացմանը ծառայեցնել տարբերակված գնահատումը՝ հիմքում դնելով Բ. Բլումի տաքսոնոմիան [7, էջ 15-20], որում լավագույնս է արտացոլված քննադատական մտածողության զարգացման գործընթացի նկարագիրը: Այս մասին իր դիտարկումն է հայտնել նաև Ն. Դավոյանը. «Բ. Բլումն առաջարկում է սովորողներին տրամադրել ոչ թե պատրաստի գիտելիքներ, այլ հիմնախնդիրներ, որոնց լուծումը կարող է զարգացնել նրանց քննադատական մտածողությունը: Դա կարևոր է, քանի որ քննադատական մտածողության զարգացման մեթոդաբանության հիմնական նպատակն է սովորեցնել ինքնուրույն սովորել» [3, էջ 296]:

Բենիամին Բլումը դեռևս 1956 թ. իմացության դրսևորումները դասակարգել է հիերարխիկ ձևով՝ առանձնացնելով վեց մակարդակներ: Ըստ այս դասավորության՝ իմացության ստորին մակարդակում գտնվում է գիտելիքը (որոշակի փաստերի և տվյալների հիշողությունը և

վերարտադրությունը), դրան հաջորդում են իմացությունը (փաստերը և տվյալները հասկանալու և մեկնաբանելու ունակությունը) և կիրառությունը (առաջադրանքի կատարման համատեքստում գիտելիքի և իմացության կիրարկումը):

Քննադատական մտածողության համար անհրաժեշտ հմտությունների հիմնական մասը ձեռք է բերվում Բ. Բլումի տաքսոնոմիայի վերջին երեք մակարդակներում: Վերլուծությունը տեղեկատվության, փաստերի կամ նյութի համեմատումն ու բաղկացուցիչ մասերի տրոհումն է՝ դրանց նշանակությունը, իմաստը և կառուցվածքային կապերն ու փոխհարաբերությունները վերհանելու և հասկանալու նպատակով: Համադրությունը տեղեկատվության, փաստերի, նյութերի, առանձին տարրերի նորովի համակցումն է՝ ցանկալի հատկանիշներով նոր ամբողջություն ստանալու կամ ստեղծելու նպատակով: Գնահատումը (արժևորումը) առկա տեղեկատվության կամ փաստերի հիման վրա դատողություններ և եզրահանգումներ անելը և արդյունքները արժևորելն է [6, էջ 18-19]:

Այսպիսով՝ նախորդ մակարդակի արդյունքները հիմք են հանդիսանում իմացության ավելի բարդ մակարդակներ զարգացնելու համար՝ ցածրակարգ մտածողության հենքի վրա աստիճանաբար կառուցելով բարձրակարգ մտածողություն:

Մանկավարժների համար մշակված մեթոդական ձեռնարկներում առաջարկվում են յուրաքանչյուր մակարդակը նկարագրող բայեր, որոնցով կազմված առաջադրանքների միջոցով կարող ենք պարզել այս կամ այն մակարդակի զարգացումը [2, էջ 44-45], [6, էջ 18-19]: Ստորև բերված աղյուսակում տարբերակված գնահատումը համապատասխանեցրել ենք նշված տաքսոնոմիայի մակարդակներին՝ ըստ գնահատման չափանիշների և տաքսոնոմիայով նախանշված աստիճանակարգման տրամաբանության (տե՛ս Աղյուսակ 1):

Ակնհայտ է, որ այս սկզբունքի վրա հիմնված տարբերակված գնահատումը արդյունավետ կդառնա յուրաքանչյուր մակարդակին համապատասխան տրամաբանորեն ճիշտ կառուցված, փոխլրացնող առաջադրանքների, հարցադրումների կամ խնդիրների լրակազմի ստեղծման դեպքում: Վերջինս դիտարկել ենք «Հոգեբանություն» առարկայի դասավանդման շրջանակներում՝ «Ուշադրություն» թեմայի օրինակով:

1. «**Գիտելիք**» մակարդակում հանձնարարվում է.

- *ներկայացնել* «Ուշադրություն» հոգեկան երևույթի սահմանումները,
 - *թվարկել* ուշադրության առանձնահատկությունները, տեսակները,
 - *պատմել* ուշադրության վերաբերյալ տեսությունները:
Այս մակարդակում պահանջվում է նյութի (փաստերի, եզրույթների, տեսությունների և այլն) մտապահումը և վերարտադրումը:
2. **«Շնկալում»** մակարդակը կապված է մտապահված նյութի հասկացմանը, իմաստավորմանը, գիտակցմանը, որը ենթադրում է հետևյալ առաջադրանքները.
- *արտահայտել* նյութի հիմնական բովանդակությունը սեփական բառերով,
 - *վերաձևակերպել* ուշադրության սահմանումները այլ բառերով,
 - *կազմել* ուշադրության տեսությունների սխեմատիկ պատկերը
 - *բնութագրել* ուշադրության՝ որպես հոգեկան գործընթացի, վիճակի, հատկության կողմերը:
3. **«Կիրառում»** մակարդակում յուրացված նյութը «հայտնվում է» տարբեր գործնական իրավիճակներում.
- *կազմել* ուշադրության տեսակների աղյուսակ,
 - *տարբերակել* ուշադրության առանձնահատկությունները նորմայում և ախտաբանության մեջ,
 - *բացատրել* ուշադրության դերը ուսումնական գործունեության մեջ:
4. **«Վերլուծություն»** մակարդակը ուսումնասիրվող նյութի կառուցվածքային տարրերի տարանջատումն է.
- *առանձնացնել* ուշադրության կենսաբանական և հոգեբանական կողմերը,
 - *համեմատել* ուշադրության տեսակները հոգեկան այլ գործընթացների տեսակների հետ,
 - *գտնել* ուշադրության և իմացական գործընթացների միջև նմանություններ:
5. **«Համադրություն»** մակարդակը պահանջվում է տրված տարրերից ստանալ նոր կոմբինացիաներ, համակցություններ, մոդելներ.
- *առաջարկել* ուշադրության զարգացման միջոցներ,
 - *մշակել* տարբեր տարիքային փուլերում ուշադրության զարգացման միջոցների մոդելներ:
6. **«Գնահատում»** մակարդակում ուսումնառողից պահանջվում է տրված նյութի կառուցման տրամաբանության, նշանակության

գնահատում, հակասությունների, դրական և բացասական կողմերի բացահայտում.

- *առաջարկել* ուշադրության հետազոտման նոր ուղղություններ,
- *արտահայտել* ուշադրության հիմնախնդրի ուսումնասիրման մակարդակի վերաբերյալ կարծիք:

Աղյուսակ 1:

**Տարբերակված գնահատման համապատասխանեցումը
Բ. Բլումի տաքսոնոմիայի մակարդակներին**

Գնահատական (ըստ 20 միավորանոց սանդղակի)	Բ. Բլումի տաքսոնոմիայի մակարդակներ	Նկարագրող բայեր
8-10	Գիտելիք Տեղեկատվությունը գտնել կամ հիշել	Պատմել, ցուցադրել, թվարկել, կրկնել, սահմանել, բացատրել, մտաբերել, անվանել:
10-12	Ընկալում Տեղեկատվությունը հասկանալ	Հանրագումարել, տարրական զուգահեռներ տանել, վերաձևակերպել, քննարկել:
12-14	Կիրառություն Տեղակատվությունը գործածել, գործադրել, կիրառել	Դիագրամ կառուցել, գրաֆիկներ կառուցել, գործողությունների վերածել, կիրառել, կիրառական համեմատություն անել, կիրառությունից հետևություն անել, տարբերը իրար հետ համադրել, հարմարեցնել:
14-16	Վերլուծություն Տեղեկատվությունը մասերի բաժանել	Ուսումնասիրել, տարանջատել, դասակարգել, հայտնաբերել, զննել, տարբերակել, մասերի բաժանել, համեմատել, վերլուծել:
16-18	Համադրում Նոր գաղափարների և առարկաների ստեղծում	Առաջադրել թեզ, կանխատեսել, ստեղծել, արտադրել, մոդիֆիկացնել, ընդլայնել, նախագծել, ձևակերպել, մշակել, կառուցել:
18-20	Գնահատում Գիտելիքի մասին դատողություններ անել	Մեկնաբանել, հիմնավորել, որոշել, քննադատել, դատողություն անել, ռեյտինգավորել, արժևորել, գնահատական տալ:

Եզրահանգում: Այսպիսով, այս եղանակով իրականացվող գնահատման գործընթացը կապահովի գիտելիքի ծավալի և խորքայնության չափելիությունը, ավելի օբյեկտիվ և վավերական կդարձնի գնահատումը՝ հիմքում ունենալով հստակ չափանիշներ: Գնահատման չափանիշների մասին հստակ պատկերացումների համակարգը բաց և թափանցիկ կդարձնի գնահատման գործընթացը՝

որոշակիացնելով դասախոսի պահանջները, հասկանալի դարձնելով գնահատման նպատակները, ընթացակարգերը: Այդպիսով կրացառվեն նաև գնահատականի նպատակահարմարության և ճշգրտության վերաբերյալ կասկածները՝ կանխելով ակադեմիական անազնվությունը: Այս ամենը կնպաստի ուսանողների՝ ուսումնական պարապմունքներին էլ ավելի ընդգրկվածությանը, ակտիվ որոնողական գործընթացի վերածմանը, ուսումնական մոտիվացիային, կրթական գործընթացի բոլոր մասնակիցների միջև փոխվստահության ամրապնդմանը: Վերջիններս ոչ միայն հնարավորություն կտան մասնագիտական տեղեկատվությանը տիրապետելուն, այլ նաև այդ տեղեկատվությունը սեփական որոշումներին ծառայեցնելու կարողություններ և հմտություններ ձեռք բերելուն:

ДИФФЕРЕНЦИРОВАННОЕ ОЦЕНИВАНИЕ КАК МЕХАНИЗМ РАЗВИТИЯ КРИТИЧЕСКОГО МЫШЛЕНИЯ СТУДЕНТА

Мазманиян М. М.

Эпоха технологий, в корне изменив жизненный образ человечества, требует от современного человека умений и навыков критического мышления, которые предоставят ему возможность адекватно оценивать разные жизненные обстоятельства, принимать самостоятельные решения в условиях огромных потоков свободной, несистематизированной информации.

С целью развития критического мышления в статье предлагается применение дифференцированного оценивания, основанного на таксономии Б. Блума, в котором наилучшим образом описан процесс развития критического мышления. Предполагается, что этот подход к дифференцированному оцениванию послужит стимулом для развития критического мышления в случае применения набора вопросов, заданий и задач, соответствующих сформированности каждого уровня этой таксономии. В статье приводятся составленные нами примеры таких заданий для изучения темы "Внимание" в рамках дисциплины "Психология".

Ключевые слова: таксономия Б. Блума, уровень познания, знание, понимание, применение, анализ, синтез, оценка.

**DIFFERENTIATED ASSESSMENT AS A MECHANISM
FOR THE DEVELOPMENT OF STUDENT'S CRITICAL THINKING**

Mazmanyanyan M. M.

The technological age, fundamentally changing the life of mankind, requires modern man the ability to quickly orient himself in the conditions of unprecedented, free, unsystematic information flows, to give adequate assessments of various life situations, the ability and skills to form his own position, to make their own decisions, which become especially possible due to critical thinking.

This article suggests using differentiated assessment for the development of student's critical thinking, based on B. Bloom's taxonomy, which best describes the process of developing critical thinking.

It is assumed that differentiated assessment based on this principle will stimulate the development of critical thinking when creating a set of logically correctly constructed complementary tasks, questions, or problems appropriate to each level of B. Bloom's taxonomy. We have considered the latter on the example of the topic "Attention" within the framework of teaching the subject "Psychology".

Keywords: B. Bloom's taxonomy, level of knowledge, knowledge, perception, application, analysis, juxtaposition, assessment.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Անափիոսյան Ա. Քննադատական մտածողություն ձևավորող կրթությունը որպես կանխակալ մտածողության արդյունքում ծագած հակասությունների կարգավորման գրավական <http://www.osf.am/wp-content/uploads/2017/10/> (18.09.2021):
2. Բուդաղյան Ա., Գրիգորյան Ա.. Արդյունահեն դասընթացների և կրթական ծրագրերի մշակում: Դասախոսի ձեռնարկ: Երևան: 2017: 284 էջ:
3. Դավոյան Ն. Բ. Բլումի տաքսոնոմիան՝ որպես քննադատական մտածողության զարգացման տեխնոլոգիա <http://lraber.asj-oa.am/6534/1/295.pdf> (18.09.2021):
4. Հայաստանի Հանրապետության որակավորումների ազգային շրջանակ <http://www.anqa.am> (18.09.2021):

5. Մազմանյան Մ. Տարբեր մասնագիտությունների ուսանողների քննադատական մտածողության առանձնահատկությունները// «Մխիթար Գոշ» գիտամեթոդական հոդվածներ: 2020: N 1: Էջ 412-414:
6. Мурзагалиева А., Утегенова Б. Сборник заданий и упражнений. Учебные цели согласно таксономии Блума. Астана. АОО «Назарбаев Интеллектуальные школы» Центр педагогического мастерства. 2015. 54 с.
7. Bloom B. Taxonomy of educational objectives: The classification of educational goals: Handbook I, cognitive domain. New York. David McKay. 1956. 216 p.

Տեղեկություններ հեղինակի մասին

Մազմանյան Մ. Մ. – հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

Վանաձորի պետական համալսարան

Էլ. փոստ՝ marianna.mazmanyanyan@mail.ru

Տրվել է խմբագրություն՝ 20.09.2021

Գրախոսվել է՝ 22.11.2021